ՀՀ ՆԳՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ (01.04.2024-30.06.2024թթ)

2024 թվականի ապրիլ 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ՝ Նարինե Վրույրի Սարդարյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Կազմել և ներկայացրել եմ հաստատման ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» 2024 թվականի հաշվապահական հաշվեկշիռը,
2. Իրականացրել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության « Ճանապարհային ոստիկանության» ծառայողների/ աշխատողների/ աշխատավարձերի անհատական քարտերի թղթային և էլեկտրոնային եղանակով հաշվապահական հաշվառման աշխատանքները,
3. Կազմել և ներկայացրել եմ հաստատման ծառայողների/ աշխատողների/ աշխատավարձերի և պարգևավճարների գումարների ֆինանսավորման հայտ պահանջագրերը,
4. Իրականացրել եմ ծախսային հաշիվների ֆինանսավորված գումարների վճարման աշխատանքները,
5. Կազմել և ներկայացրել եմ հաստատման ծառայողների/ աշխատողների/ աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանքները,
6. Կազմել եմ ծառայությունից ազատված և այլ ծառայության տեղափոխված աշխատողների վարձատրության մասին վկայականները,
7. Հաշվարկել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայողների/ աշխատողների/ սոցփաթեթի ամենամսյա գումարները,
8. Ներկայացրել եմ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվետվությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտե,
9. Իրականացրել եմ անմիջական ղեկավարի կողմից հանձնարարված աշխատանքները:

Հարգանքով՝
ՀՀ ՆԳՆ ՖԲՎ փորձագետ Ն.Վ. Սարդարյան
01.07.2024թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները
Գնահատում եմ <<_____>>

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ,
Վ. Պետրոսյան 01.07.2024թ.